ծերանալն ամենաբնական երեւույթներից է, սակայն այնպես է ստացվել, որ այս հասարակությունում ծերությունը վերածվել է լռության ու մոռացվածության խորհրդանիշի:

տարեց մարդկանց՝ հատկապես կանանց նկատմամբ վերաբերմունքը նշանավորվում է մակերեսային հարգանքով, երբեմն՝ խղճահարությամբ, բայց հիմնականում՝ անտեսմամբ:

մարդու ծերանալը Հայաստանում, այս համակարգում, հաճախ նշանակում է հրաժարվել ընտրության ազատությունից, առողջությունից, ձայնից, եւ այդ անտեսվածության ամենահարվածային կետն առողջապահությունն է:

ծերացող կանանց «աներեւույթ ներկայությունը»

ծերացող կնոջ կերպարը գրեթե բացակայում է հանրային պատկերացումից:

մեդիայում, առողջապահական քաղաքականություններում, նույնիսկ խորհրդատվական սենյակներում հիմնական շահառուն հաճախ «միջին տարիքի մարդն է»՝ չսահմանված սեռով: մինչդեռ տարեց կանայք ոչ միայն կազմում են բնակչության զգալի մասը, այլ նաեւ ամենախոցելի խմբերից են.

- նրանք ապրել են մի կյանք, որտեղ հիմնականում իրականացրել են խնամք ենթադրող աշխատանք, խնամել են երեխաներին, հիվանդներին, ամուսիններին, ծնողներին,
- իսկ երբ գալիս է իրենց խնամքի ժամանակը, առողջապահական համակարգն առաջարկում է երկար հերթեր, զրոյական արձագանք եւ գործնականում անհասանելի ծառայություններ:

առողջապահություն, որը նախատեսված չէ «չաշխատողների» համար

պետական առողջապահական քաղաքականությունը կառուցված է այն տրամաբանությամբ, որ մարդը պետք է արտադրի, հարկ վճարի, եւ միայն այդ ժամանակ ստանա ծառայություններ:

իսկ ի՞նչ է լինում, երբ մարդն արդեն թոշակառու է, երբ առողջական խնդիրներն արդեն բազմապատկվել են, բայց պետության առաջարկած սոցիալական պաշտպանության ծրագրի միակ «արժանիքը» անվճար արյան հետազոտությունն է:

տարեց կանայք հաճախ չունեն՝

- բավարար թոշակ՝ որակյալ բժշկական ծառայություններ ձեռք բերելու համար,

- տեղեկատվություն՝ ինչ իրավունքներ ունեն,
- վստահություն, որ իրենք ստանում են պատշաճ ուշադրություն ու արձագանք:

ավելին, կանայք ապրում են միջինում ավելի երկար, քան տղամարդիկ, եւ շատ ավելի հաճախ են մնում մենակ, բայց դա եւս երբեք չի դառնում առողջապահական քաղաքականություն մշակողների օրակարգային հարց:

խնամքի ճգնաժամ

ծերությունը միայն բժշկական թեմա չէ: այն նաեւ խնամքի ու հոգատարության հարց է, բայց Հայաստանում խնամքը մինչ օրս ընկալվում է որպես կանանց անձնական պարտավորություն: տարեց մարդկանց խնամքը, հատկապես կանանց, ընկած է մյուս կանանց ուսերին՝ աղջիկների, հարսների, հարեւանների:

ո՞վ է մտածում խնամող կանանց առողջության մասին: ո՞վ է հոգում, որ նույն տանը բնակվող 75-ամյա դուստրը խնամում է իր 95-ամյա մորն ամեն օր այն պարագայում, երբ այդ ամենօրյա խնամքի ու աջակցության կարիքն ինքն ունի: ինչպե՞ս է պետությունն արդարացնում իր ստեղծած այն համակարգի գոյությունը, որը հույսը դրել է «ընտանեկան կապերի» վրա:

արժանապատիվ ու հասանելի ծառայությունները պետք է դիտարկվեն որպես պետական պատասխանատվության հարց:

տարեց լինելը չի նշանակում ապրել առանց որոշում կայացնելու ազատության

տարեց կանայք հաճախ դադարում են մասնակցել որոշումների կայացմանը: նրանց ձայնը բացակայում է տեղական ինքկառավարման մարմինների, առողջապահական բարեփոխումների քննարկումներում, նույնիսկ իրենց թաղամասին վերաբերող հարցերում: նրանց ոչ թե հարցնում են՝ ինչ են ուզում, այլ՝ լռեցնում ու որոշում են նրանց փոխարեն:

սա հիմնարար իրավունքների խախտում է: բոլոր մարդիկ՝ անկախ տարիքից, սեռից ու ինքնությունից, ունեն որոշում կայացնելու իրավունք: **եթե մի պետություն կառուցում է առողջապահական համակարգ, բայց դրա ձեւավորման մեջ ներգրավված չեն հենց շահառները՝ այդ համակարգը չի կարող աշխատել:**

տարեց կինը պետք է ազատ լինի որոշումներ կայացնելիս: նա իրավունք ունի՝

- ընտրել՝ ինչպես բուժվել,
- ստանալ հոգեկան առողջության աջակցություն,
- ունենալ անվտանգ միջավայր, որտեղ ծերությունը հարգվում է, ոչ թե՝ անտեսվում,
- ...

ի՞նչ է պետք փոխել՝ համակարգային մակարդակով

անհատական փոփոխությունները բավարար չեն:

պետք է փոխվի ամբողջ մտածողությունը: մեզ անհրաժեշտ են՝

- **նոր ծրագրեր՝ ուղղված տարեց կանանց առողջությանը**
  - մասնագիտացված ծառայություններ՝ կնոջ առողջության փոփոխվող կարիքներին համապատասխան,
  - հոգեկան առողջության անվճար աջակցություն՝ մենակության, կորստի, դեպրեսիայի եւ այլ հարցերով,
  - լայնորեն իրազեկում իրավունքների եւ պաշտպանության մեխանիզմների մասին,

- **խնամքի ծառայությունների ընդլայնում**
  - հասանելի եւ կրթված աջակցող մասնագետներ՝ համայնքային ծառայությունների մակարդակով,
  - ընդլայնված տնային խնամքի ծառայություններ, որպեսզի անձն իրեն անհրաժեշտ աջակցությունը կարողանա ստանալ տանը,

- **մասնակցային մոդել՝ տարեց մարդկանց իրական ներգրավմամբ**
  - տարեց կանանց ներառել սոցիալ-առողջապահական քաղաքականության քննարկման գործընթացում,

- **կրթական արշավներ՝ ուղղված ծերության դեստիգմատիզացիային**
  - ծերությունը ցույց տալ որպես կյանքի փուլ, որտեղ յուրաքանչյուրս կարող ենք նկատել, որ արժանապատիվ ծերանալը բոլորիս իրավունքն է:

«Առողջության իրավունք. բովանդակություն բոլորի համար» ծրագիրն իրականացվում է «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի՝ ԵՄ ֆինանսավորմամբ ընթացող «Դիմակայուն քաղաքացիական հասարակություն Արեւելյան գործընկերության տարածաշրջանում» ծրագրի շրջանակում: Ծրագրի ենթադրամաշնորհները համաֆինանսավորվում են Չեխիայի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կողմից:

Funded by the European Union
CZECH AID
TRANSITION Ministry of Foreign Affairs of the Czech Republic
People in Need

Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Փոփոխություն թիմը, եւ պարտադիր չէ, որ այն արտահայտի ֆինանսավորող կողմերի տեսակետները: